ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

25 նոյեմբերի 2011 թվականի N 171-Ա

ք. Հրազդան

Ա. ԵՆՈՔՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի նոյեմբերի 18-ի N 471-Ա որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Կամարիսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 6 որոշումը՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. ***Արամայիս Ենոքյանին*** 2011 թվականի նոյեմբերի 25-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Կամարիսի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ լուծելով ***Արամայիս Ենոքյանի*** հետ 2005 թվականի հունիսի 22-ին կնքված N 24 աշխատանքային պայմանագիրը:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել դպրոցի հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ